ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԹԱՆԵՍՅԱՆ ԳԱՐԻԿ ՀՐԱՀԱՏԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Թ.00.06 – «Մշակութաբանություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АТАНЕСЯН ГАРИК ГРААТОВИЧ

СОВЕТСКИЙ И ПОСТСОВЕТСКИЙ ПАМЯТНИК В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ПУБЛИЧНОМ ДИСКУРСЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук
по специальности 09.00.06 «Культурология»

ЕРЕВАН – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Ն. Մ. Մարգարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆ. Ռ. Ս. Նահապետյան
պ. գ. թ. Ա. Զ. Թադևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հուլիսի 12-ին, ժ. 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):
Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 12-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете факультета истории ЕГУ

Научный руководитель: к. и. н. Маргарян Н. М.
Официальные оппоненты: д. и. н., проф. Нагапетян Р. А.
к. и. н. Тадевосян А. З.

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарапатской битвы, Национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 12 июля 2018 г., в 14:00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15).

Автореферат разослан 12 июня 2018 г.
Ученый секретарь специализированного совета
Кандидат исторических наук Мелконян У.А.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության արդիականությունը</u>

Հայաստանի անկախացման գործընթացի մեկնարկման ուշագրավ դրսևորումնե-րից մեկը խորհրդային Հայաստանի քաղաքներում կանգնեցված մի շարք հուշարձան-ների նկատմամբ քաղաքացիների ցուցաբերած վերաբերմունքն էր, իմաստավորի՝ դը-րանց ոչնչացումը, տեղահանումը և փոխատեղումը: ԽՍՀՄ փլուզումը և քաղաքական համատեքստի փոփոխությունը, ղարաբաղյան կոնֆլիկտն ու հայ-ադրբեջանական հա-կամարտությունը, ինչպես նաև 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Հա-յաստանի համար ստեղծել

էին նոր սոցիալական, քաղաքական ու տնտեսական մար-տահրավերներ: Այս նոր գործընթացներում ակտիվ մասնակից դարձավ նաև հանրու-թյունը՝ հանդիսանալով փոփոխությունների իրականացման առաջնային սուբյեկտնե-րից մեկը: Անկախ պետականության գոյության շուրջ 30 տարիների ընթացքում այս նոր սուբյեկտը տարբեր ակտիվությամբ և տարբեր միջոցներով որոշիչ դերակա-տարություն է ունեցել և շարունակում է ունենալ ՀՀ քաղաքների լանդշաֆտների ճակատագրի խորհրդանշանային կազմակերպման գործում, մեծ ազդեցություն ունենալով նաև քաղաքների արձանային դաշտի նոր և որակական փոխակերպումների վրա: Հայաստանի քաղաքների արձանային լանդշաֆտի փոխակերպումները բազմաշերտ են և ընդգրկում են այդ կառույցների հետ կապված բովանդակային և ֆիզիկական-տարածական բոլոր առումները: Հետխորհրդային Հայաստանում մի կողմից նկատելի է հուշարձանների տեղադրման ինտենսիվ գործընթացներ, մյուս կողմից նախկիններ վերաիմաստավորում, ինչպես նաև՝ բուն քննարկումներ նոր հուշարձանների տեղադրման հետկապված:

<u>Աշխատանքի նպատակն ու խնդիրները</u>

Ատենախոսական աշխատանքի նպատակը հեխորհրդային Հայաստանի քաղա-քային հուշարձանային լանդշաֆտի նոր և որակական փոխակերպումների և դրանցում հանրային գործոնի դերակատարության ներկայացումն է՝ հիմնական գծերով և առանձնահատկություններով:

Ատենախոսական աշխատանքի առջև դրված խնդիրներն են.

1. Հետխորհրդային Հայաստանում հանրային տարածքներում հուշարձան տեղադրող սուբյեկտների փոխակերպումների ներկայացումը,
2. Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի բովանդակային փոխակերպումների ներկայացումը,
3. Հետխորհրդային Հայաստանի քաղաքներում հուշարձանների տեղադրության վայրերի և հուշարձանային հաղորդակցության պրակտիկաների փոխակերպումների ցուցադրումը,
4. Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի փոխակերպումներին նպաստած գործոնների բացահայտումը և ներկայացումը:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>

Ատենախոսական աշխատանքում առաջին անգամ

ա/ հանրությունը և հանրային դիսկուրսը ներկայացվում են որպես Հայաստանի քաղաքային և նշանային լանդշաֆտի փոխակերպումների վրա ազդող կարևոր գործոններ,

բ/ Հետազոտվել են ՀՀ 10 մարզերի 24 քաղաքների քաղաքային հուշարձանային տարածքները,

գ/ համակարգված դիտարկվում են հուշարձանային հաղորդակցության եղանակները,

դ/ շրջանառության մեջ են դրվում նաև նոր բանավոր և վիզուալ նյութեր:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել

ա/ ՀՀ քաղաքների հանրային տարածքների ճարտարապետական, քաղաքաշինական պլանավորման մեջ,

բ/ համայնքային և համապետական մակարդակում հուշարձանային քաղաքականության, առանձին նախագծերի մշակման և իրականացման գործում,

բ/ նոր հուշարձաններ տեղադրելիս և նոր հուշարձանների տեղադրման քաղաքական, մշակութաբանական և արվեստային մեկնաբանություններում:

<u>Ատենախոսության մեթոդաբանական հիմքը</u>

Պայմանավորված հետազոտվող նյութի մատչելիությամբ՝ ատենա-խոսության տար-բեր բաժինների շարադրանքի համար կիրառվել են հետազոտական տարբեր մոտե-ցումներ: Խորհրդային ժամանակահատվածին վերաբերող նյութերը ձեռք են բերվել ինչպես տարբեր հեղինակների ուսումնասիրություններից և ժամանակի վավերագրութ-յուններից, այնպես էլ ազգագրական հարցումների միջոցով և վիզուալ արձանագրման ու հարցաթերթային մեթոդների կիրառմամբ: Հայաստանի անկախության փուլին վերաբերող նյութերը գրանցվել են հիմնականում ուղղակի, անուղղակի դիտումների և ազգագրական հարցումների օգնությամբ: Հետխորհրդային շրջանի նյութերի մի զգալի մասը ՁԼՄ-ների, սոցիալական ցանցերի ու կայքերից գրանցված քննարկումներն ու հրապարակումներն են, որոնք ենթարկվել են բովանդակային ու դիսկուրս վերլուծության:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին տեղադրված հուշարձանների հան-դեպ հանրային վերաբերմունքը և հուշարձանային նոր պրակտիկաները, նրանց փոփո-խությունները գրանցելու նպատակով դիտումներ ենք անցկացրել և ազգագրական նյութեր գրանցել Երևանում և ՀՀ 10 մարզերի 24 քաղաքներում: Նյութեր ենք գրանցել ՀՀ մայրաքաղաք Երևանի բոլոր վարչական շրջաններում, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ քաղաքներում, Լոռվա մարզի Վանաձոր և Սպիտակ քաղաքներում, Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Սյունիքի մարզի Կապան, Գորիս և Սիսիան քաղաքները, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ,

Արարատի մարզի Արարատ, Վեդի, Արտաշատ, Մասիս, Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ քաղաքները, Արմավիրի մարզի Արմավիր, Վաղարշապատ, Կոտայքի մարզի Աբովյան, Ծաղկաձոր քաղաք-ներում, Արագածոտնի մարզի Աշտարակ, Ապարան քաղաքներում:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսական աշխատանքի համար կարևորագույն համարվող «հուշարձան», «դիսկուրս», «հանրություն» հասկացությունները քննության են առնվել մի շարք աշխատություններում: «Հուշարձան» հասկացության ձևակերպման, ինչպես նաև պատմական և հիշատակման առումների հետ կապված տեսական հարցերը լայն բազմակողմանի քննության են ենթարկվել Դ. Ռեյնոլդսի, Ֆ. Չոայի, Մ. Տուդմանի, Ն. Ջոնսոնի, Ի. Հայի, Հ. Էնդրյուի և Մ. Տուտտոնի, Ջ. Յանգի աշխատանքներում: Պ. Քոբլիի, Ու. Էկոյի, Մ. Տամմի, Լ. Հերշկովիցի և այլոց աշխատություններում հուշարձանը քննվում է քաղաքականության և հաղորդակցության համատեքստում:

«Դիսկուրս» հասկացության հետ կապված տեսական հարցերին են վերաբերում Ն. Ֆիլլիպսի, Ս. Հարդիի, Տ. վան Դեյկի, Յու. Հաբերմասի, Տ. Չերեպանովայի, Դ. Բալուևի, Դ. Ռոգոզինի աշխատանքները: Դիսկուրսների ձևավորման և հասարակության վրա նրանց ունեցած ազդեցության հարցերը ներկայացվում են Մ. Յորգենսենի և Լ. Ֆիլլիպսի «Дискурс анализ. Теория и метод» հավաքական աշխատությունում: Հանրայինի և հանրային ոլորտի ձևակերպումների համար հատկապես կարևորվել են Հաբերմասի «Between facts and norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy» աշխատությունը և այլ գիտական աշխատանքներ:

Հայաստանի խորհրդային և հետխորհրդային հուշարձանները և նրանց առնչվող փոխակերպումների ուսումնասիրման համար էական են եղել հայ ազգագրագետներ Լ. Աբրահամյանի, Ն. Մարգարյանի, Գ. Ծագոյանի և Հ. Մարությանի մի շարք աշխա-տություններ: Աշխատանքի համար կարևորվել է նաև Հ. Խառատյանի, Գ. Ծագոյանի, Հ. Մարությանի և Լ. Աբրահամյանի՝ «Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա» աշխատությունը:

Աշխատանքի պաշտոնական հավանություն

Ատենախոսության մեջ ներկայացվող առումները և առանձին դրույթները քննարկվել են տարբեր գիտաժողովներում և գիտական հոդվածներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնում: Քննարկման մասնակիցների

արված նկատառումները հաշվի են առնվել ատենախոսության վերջնական տարբերակում:

<u>Աշխատանքի կառուցվածքը</u>

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և նկարներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, թեմայի ուսումնասիրվածության վիճակը և գիտական հրապարակումները, ատենախոսության արդիական, նորույթային նշանակությունները, շարադրանքում օգտագործվող հիմնական հասկացությունները, աշխատանքի հետազոտական ու վերլուծական մեթոդաբանությունը, և ատենախոսության համառոտ կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ: ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՈՐՊԵՍ ԻԾԽԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Հուշարձանային լանդշաֆտի (վերա)կազմավորումը գերազանցապես կապված է այն իրականացնող սուբյեկտների հետ, որոնք էլ պայմանավորեցին Հայաստանի քաղաքային տարածքների նշանային փոխակերպումները: Այս գլխում անդրադարձ է կատարվում խորհրդային և հետխորհրդային տարիներին հուշարձան տեղադրող հիմնական սուբյեկտներին, հանրության՝ հուշարձանային քաղաքականության վրաունեցած ազդեցությունը:

<u>1.1 Խորհրդային իշխանությունների հուշարձանային քաղաքականությունը և խորհրդային քաղաքացին:</u> Խորհրդային տարիների Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հայտնված մոնումենտալ քանդակները խորհրդային իշխանութ-յունների վարած հուշարձանային հստակ քաղաքականության արդյունք էին և վերա-հսկվում ու իրականացվում էին մեկ կենտրոնից: Խորհրդային Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտների ձևավորման հարցում դեր էր հատկացված նաև խորհրդային քաղաքացուն: Հայաստանի բնակչին հատկացված այդ դերը հիմնականում սահմանափակվում էր նոր տեղադրվող հուշարձանների նախաձեռնություններին համաձայնություն տալով և պաշտպանելով, որն էլ իր հերթին ուղղորդվում և վերագրվում էր կենտրոնից: 1960-ական թվականներին, ճիշտ է, Հայաստանի բնակավայրերից մի քանիսում տեղի բնակիչների ջանքերով

հայտնվեցին զորավար Անդրանիկի արձանները, սակայն խորհրդային իշխանությունները անմիջապես ջանքեր գործադրեցին իրենց համար ոչ ցանկալի այդ խորհրդանիշները հանրային վայրերից հեռացնելու համար: Իսկ, նույն ժամանակահատվածում, ազգային զարթոնքի շրջանում տեղադրված հուշարձանները միևնույն է համաձայնեցվում էին Մոսկվայի հետ և խմբագրվում ու վերահսկվում նրա կողմից: Խորհրդային քաղաքացին ոչ քիչ դեպքերում չէր հավանում նոր տեղադրված հուշարձանները և պահանջում էր փոխել և ձևափոխել դրանք, սակայն մեծ հաշվով այդ դժգոհությունները չէին ազդում խորհրդային իշխանությունների որոշումների վրա և հուշարձանային քաղաքականության իրականացման ողջ իրավունքները շարունակում էին իրենք տնօրինել:

<u>1.2 Հանրությունը որպես հուշարձան տեղադրող նոր սուբյեկտ</u> 1988թ.-ից սկսած Հայաստանում հանրության համար՝ հուշարձանային քաղաքականության ակտիվ սուբյեկտ դառնալու նախադրյալներ ստեղծվեցին: 1988 թ.-ի աղետալի երկրաշարժը, արցախյան շարժումն ու ազատամարտը հիմք հանդիսացան, որ Հայաստանի հանրությունը ստանա հուշարձանների տեղադրման նախաձեռնողի և իրագործողի դերակատություն: Առանձին անհատների, տարբեր խմբերի կողմից տեղադրվող հու-շարձանների նոր արակտիկան չարգելվեց իշխանությունների կողմից, որոշ դեպքերում խրախուսվեց և հետագայում լայն տարածում ստացավ Հայաստանի ողջ տարածքով: Հայաստանի բնակիչները հատուկ դեր ստանձնեցին նաև ԽՍՀՄ փլուզման և անկա-խության հաստատման առաջին տարիներին, երբ պայքար սկսվեց խորհրդային ան-ցյալի խորհրդանիշների՝ հատկապես Հայաստանի բոլոր բնակավայրերը պատած Վ. Լենինի արձանների դեմ: Անկախության հետագա տարիներին, սակայն, հանրությունը կորցրեց հուշարձանների տեղադրման իր նախկին ակտիվ դերը և հուշարձանային քա-ղաքականության իրականացման գործառույթը գրեթե ամբողջությամբ անցավ համայն-քային իշխանությունների ձեռքը: Հաջորդած տարիներին ՀՀ քաղաքացին, չնայած որոշ բացառություններին, մեծամասամբ դուրս է մնում նոր հուշարձանների տեղադրման գործընթացից, հանդիսանալով նրանց քննարկողը վիրտուալ տիրույթում: Այնուհան-դերձ, տեսնում ենք, որ հանրային դիսկուրսը վերջին տարիներին կրկին սկսել է հանդես գալ որպես հուշարձանային քաղաքականության իրականացման կարևոր դերակատար:

<u>1.3 Համայնքային իշխանությունները և հուշարձանային քաղաքականությունը արդի Հայաստանում:</u> 1990-ական թվականների

կեսերից Հայաստանի հուշարձանային քաղաքականության վերահսկողությունը գրեթե ամբողջությամբ անցավ քաղաքային իշխանությունների ձեռքը, ովքեր ոչ միայն սկսեցին վերահսկել այդ դաշտը, այլև դարձան հետխորհրդային Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտների ձևավորման ամենաակտիվ սուբյեկտը: ՀՀ համայքնային իշխանությունների ջանքերով վերջին տարիներին Հայաստանի բնակավայրերի հանրային տարածքները շարունակում են պատվել բազմաթիվ հուշարձաններով՝ տեղի բնակիչներին վերածելով հիմնականում որպես դրանց հանդիսատեսի: Այնուհանդերձ, առանձին անհատներին նվիրված հուշաղբյուրների տարածումը և 2016թ. տեղի ունեցած ապրիլյան պատերազմը, երբ հայկական կողմի զոհերի հիշատակին առանձին բնակիչների ջանքերով հուշարձաններ հայտնվեցին ՀՀ բազմաթիվ բնակավայրերում, ցույց տվեցին, որ հանրույթը, պատմական որոշակի պայմաններում, վերագտնում է հուշարձան տեղադրողի իր ակտիվ դերակատարումը և պատրաստ է այն նաև հետագայում իրականացնել:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ: ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆԻ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԻ, ՊԱՏՄԱԿԱՆԻ և ԱՐԺԱՆԱՎՈՐԻ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ

2.1 Հուշարձանային ուղերձները խորհրդային Հայաստանում:

Խորհրդային տարիներին Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հուշարձանների տեղադրումը գաղափարականացված էր: Կանգնեցվող բոլոր նոր կոթողները պետք է ներկայացնեին հեղափոխության և Կոմունիստական կուսակցության հայացքները: Խորհրդային իշխանությունները վերահսկում էին տեղադրվող հուշարձանների և՛ ձևը, և՛ բովանդակությունը՝ արձանագործների աշխատանքները ենթարկելով խիստ գրաքննության՝ բացառելով անցանկալի խորհրդանիշների հայտգալը քաղաքների նշանային դաշտերում: Հայաստանի խորհրդային քաղաքային հուշարձանային ժառանգությունը պաշտոնական. «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» հայտնի հռետորությանարտահայտությունն էր: Խորհրդային քաղաքներում առաջնահերթ հայտնվում էին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջնորդների, Կոմունիստական կուսակցության հայտնի գործիչների հուշարձանները, տեղադրվում էին նաև արվեստի նշանավոր ներկայացուցիչների արձանները, առասպելական և գեղարվեստական կերպարների քանդակներ, ինչպես նաև խորհրդային կոլեկտիվ հերոսների արձաններ: Խորհրդային իշխանությունների կողմից

խիստ գրախոսության ենթարկվող հուշարձանները նպատակ ունեին խորհրդային քաղաքացուն դաստիարակել հեղափոխության և Կոմու-նիստական կուսակցության գաղափարներով, նրանց փոխանցել խորհրդային պետու-թյան պատկերացումները՝ հերոսության, քաջության, աշխատանքի, հավասարության, գեղեցիկի մասին:

2.2 Հուշարձանային ուղերձների փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում: Հետխորհրդային Հայաստանի քաղաքների լանդշաֆտներում անկախության սկզբի տարիներին հայտնվեցին հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հուշարձաններ, հետագայում հայ քաղաքական, հասարակական գործիչների արձանները, Հայաստանի բնակավայրերը պատեցին աղետի և պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները, անհատներին նվիրված աղբյուր-հուշարձանները՝ փոխակերպելով խորհրդային տարիներին ձևավորված նշանային լանդշաֆտը: Արվեստի նշանավոր գործիչներին նվիրված նոր հուշարձանների կողքին անկախության տա-րիներին տեղադրվեցին նաև բարերարներին նվիրված արձաններ, կրոնական թեմա-ներով և խորհրդանիշներով հուշարձաններ, որոնք նորություն էին ՀՀ հանրային վայ-րերում: Վերջին տարիներին Հայաստանի քաղաքներում սկսել են հայտնվել քաղաքա-կան գործիչներին նվիրված հուշարձաններ, որոնք երբեմն տեղադրվում են ոչ թե՝ նկա-տի ունենալով այդ գործիչների գործունեության համապե-տական կարևորությունը, այլ, պարզապես իբրև որևէ կուսակցական գաղափարախոսության նշանային արտա-հայտում:

2.3 Խորհրդային հուշարձանների ճակատագիրը հետխորհրդային Հայաստանում: ԽՍՀՄ փլուզումից հետո խորհրդային շատ հուշարձաններ հեռացվեցին Հայաստանի քաղաքներից՝ փոխարենը հյուրընկալելով նորերին կամ մնալով դատարկ: Անկախության առաջին տարիներին ընթացած արձանամարտը քաղաքական բնույթ էր կրում և ուղղված էր խորհրդային անցյալի նշանների դեմ, հատկապես, Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության առաջնորդների արձանների: Արդյունքում, Հայաստանի քաղաք-ների հանրային վայրերից հեռացվեցին բարձրարժեք քանդակներ, որոնց արվեստային առումների մասին արված մեկնաբանությունները, արձանամարտի ընթացքում, կամ հաշվի չառնվեցին կամ արդեն ուշացած էին: Մյուս հուշարձանները, որոնք հեշտությամբ տեղավորվում էին ազգայինի համատեքստում՝ նաև հեշտությամբ վերաիմաս-տավորվեցին և շարունակեցին կանգուն մնալ իրենց նախկին տեղերում:

2.4 Հուշարձանային նոր քաղաքականությունը արդի հանրային քննարկումներում: Հայաստանում վերջին տարիներին մի շարք խնդրահարույց հուշար-ձանների տեղադրման շուրջ առաջացած հանրային սուր քննադատություններից զատ, անկախության տարիներին ՀՀ քաղաքային լանդշաֆտներում հայտնվող նշանային նոր ուղերձները հանրային դիսկուրսում մեկնաբանվում են որպես հուշարձանացման համար ցանկալի և ընդունելի թեմաներ: Այնուհանդերձ, վերջին տարիների հակառու-սաստանյան դիսկուրսի ակտիվացման պայմաններում, հանրային դիսկուրսում հուշար-ձանացման ցանկալի թեմատիկայի աստիճամակարգության մեջ խորհրդային ականա-վոր գործիչների հիշատակումը սկսել է ստորադասվել հիշատակման արժանի մյուս բոլոր բովանդակությունների շարքում՝ առաջնային պլան մղելով ազատագրական պայքարի, պետական գործիչների և նահատակների հիշատակման մոտիվները:

2.5 Հորինվածքային նոր լուծումներով հուշարձանները և նրանց շուրջ քննարկումները հետխորհրդային Հայաստանում: Հետխորհրդային Հայաստանում հանրությունից, քաղաքային իշխանություններից բացի վերջին տարիներին քաղաքա-յին համայնքների նշանային լանդշաֆտներում իբրև փոփոխություն կատարող են հան-դես գալիս նաև տարբեր բարերարներ և գործարարներ, ում միջոցներով և նախա-ձեռնությամբ տեղադրվում են զանազան հուշարձաններ: Հանրային և արվեստային դիսկուրսներում նոր հուշարձաններից շատերը սկսում են քննադատվել որպես արվեստային առումով վատ կատարված աշխատանքներ, որոնք հայտնվում են քաղաք-ների հանրային տարածքներում՝ նակին բարձրակարգ հուշարձանների կողքին: Եթե խորհրդային տարիներին հուշարձանները առաջնահերթ կապվում էին դրանք կերտող քանդակագործների հետ, ապա ներկայում հուշարձանները առավելապես հայտնի են իրենց տեղադրողներով: Արդյունքում, հուշարձանների հորինվածքային, գեղագիտա-կան վատ լուծումները հաճախկապվում են տեղադրողների ու պատվիրողների և ոչ թե քանդակագործ հեղինակների «վատ ճաշակի» կամ «ռաբիզության» հետ: Հետխորհըր-դային Հայաստանի քաղաքային լանդշաֆտներում տարիներ շարունակ հայտնվում են նշանավոր անհատներին նվիրված ռեալիստական արձաններ, որոնք հանրային քննարկումներում մեկնաբանվում են որպես մահարձաններ: Նմանատիպ բազմաթիվ արձանների տեղադրումը նպաստել է հանրային դիսկուրսում քաղաքային արձանները իբրև գերեզմանային մեկնաբանելուն: Հանրային դիսկուրսում քաղաքային հուշարձան-

ների գերեզմանային մեկնաբանությունների վրա ազդում են նաև հանրային տարածքներում կանգնեցվող արձանների հորինվածքներում գերեզմանային պրակտիկային բնորոշ լուծումների կիրառումը: Վերջին տարիներին հանրային քննադատության առարկա են դառնում քաղաքային մասնավորեցված հանրային տարածքները, մասնավորապես Կասկադի համալիրի քանդակային պարտեզը, որտեղ կանգնեցվում են զանազան հուշարձաններ: Երևանի բնակիչներն՝ այդ աշխատանքները համեմատության մեջ դնելով քաղաքի մյուս հուշարձանների հետ՝ քննադատում են նման քանդակների բովանդակությունը և գեղարվեստական լուծումները՝ հաշվի չառնելով այդ տարածքների կարգավիճակը:

ԳԼՈՒԽ 3-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ:

3.1 Հուշարձանի տարածքի ընտրությունը խորհրդային Հայաստանում: Խորհրդային Միության քաղաքաշինական մոդելում հուշարձանին հստակ տեղ և դեր էր հատկացված: Հուշարձանները հանդիսանալով տարածքի կազմակերպման հիմնա-սյուններից՝ ամբողջացնում էին քաղաքների առանձին հատվածների համատեքստային և նշանային անընդհատությունը: Վարչական շինություններով զբաղեցված տարածքի վրա հսկում էին հեղափոխական և քաղաքական գործիչների արձանները, մշակու-թային շինությունների տարածքներն ամբողջացնում էին մշակութային գործիչների հուշարձանները, իսկ սոցիալիստական ապագան նշանավորող մյուս բազմաբնույթ կո-թողները զարդարում էին բնակավայրերի հիմնական հրապարակները, այգիները և փողոցները: Վ. Լենինի և, որոշակի ժամանակահատված նաև, Ի. Ստալինի արձանները ամենուր էին՝ գլխավոր հրապարակներում, փողոցներում, այգիներում, կայարանների մոտ՝ հսկելով քաղաքների և նրա բնակիչների առօրյան: Կենտրոնը, խորհրդային քաղաքաշինության համար, այն տարածքն էր, որի շուրջ կազմակերպվում էր բնակավայրը, իսկ հուշարձանը հանդիսանում էր այդ տարածքի գլխավոր նշանը: Խորհրդային տարիներին կարևոր ուղերձ պարունակող հուշարձանները կանգնեցվում էին բնակավայրերի առավել մարդաշատ հատվածներում՝ քաղաքներում ստեղծելով ուժեղ նշան-ներ, որոնք հանրությանը անդադար պետք է հիշեցնեին իրենց հերոսների, կարևոր արժեքների և գաղափարների մասին:

3.2 Հուշարձանի տարածքի ընտրությունը հետխորհրդային Հայաստանում: ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանի անկախության սկզբնական շրջանում հանրության կողմից ինքնակամ տարբեր հուշարձանների

տեղադրումը, քաղաքաշինության փոխա-կերպումները, քաղաքային նոր տարածքների առաջացումը, հների վերափմաստավո-րումը, քաղաքային տարածքների և նրանցում տեղադրվող հուշարձանների վերարժևո-րումը մեծ ազդեցություն ունեցան նոր հուշարձանների տեղադրման տարածքների ընտրության փոխակերպումների վրա: Խորհրդային Միության գոյության վերջին և ՀՀ անկախության առաջին տարիներին հանրությունը, հատկապես մարզերում սեփական նախաձեռնությամբ սկսեց տեղադրել երկրաշարժի, հայ ազատա-գրական պայքարի և արցախյան պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձաններ, որոնք հայտնվեցին Հայաստանի քաղաքային լանդշաֆտների բոլոր հնարավոր հատվածնե-րում՝ շատ դեպքերում հաշվի չառնելով տեղադրման տարածքների գործող կամ նախ-կին համատեքստերը, շրջակա նշանների ուղերձները: Հուշարձանների այդ խմբերին շուտով ավելացան նաև թաղերի հեղինակություններին և վաղաժամ մահացած բնա-կիչների հիշատակին նվիրված կոթողներն ու հուշաղբյուրները, որոնք տեղակայվում էին ինչպես բակերում, այնպես էլ թաղամասը եզերող փողոցների մայթերի, նույնիսկ հրապարակներում: Կենտրոնում անպայման քաղաքական նշան տեղադրելու պատկե-րացումները ՀՀ մի շարք վայրերում դեռևս շատ ուժեղ են, սակայն ի տարբերություն խորհրդային տարիների, երբ նշանը տեղադրվում էր հենց այդ կենտրոնում, ներկայում քաղաքի հիմնական նշանը սկսում է տեղափոխվել կենտրոնից մի փոքր «ներքև», որը հիմնականում կապվում է կենտրոնի նախկին գլխավոր նշանի մասին հանրային բացասական հիշողությունների պահպանման հետ: Հետխորհրդային Հայաստանում հուշարձան տեղադրելու համար ամենակարևոր տարածք է դառնում քաղաքի կենտ-րոնը, որտեղ կենտրոնանում են բնակավայրի ժամանցային, կոմերցիոն հիմնական հաստատությունները՝ գրավելով ոչ միայն տեղի բնակիչներին, այլև քաղաքի հյուրերին: Հետխորհրդային տարիներին հուշարձանի տեղադրման տարածքները ընդլայնվեցին՝ ընդգրկելով նաև բնակավայրերի երկրորդային փողոցները, բնակելի թաղամասերի բակերը, խաչմերուկները, որոնք խորհրդային ժամանակներում հուշարձանային տե-սանկյունից հիմնականում նշանացված չէին: Հայրենական պատերազմի հուշարձան-ների տարածքները հետխորհր-դային տարիներին սկսել են վերածվել պանթեոնների՝ իրենց կողքին հյուրընկալելով Արցախյան ազատամարտի, Հայոց Ցեղասպանության, երբեմն երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները:

3.3 Խորհրդային հուշարձանային տարածքները անկախ Հայաստանում: Խորհրդային տարիներից ժառանգություն մնացած շատ հուշարձաններ վերածվել են անկախ Հայաստանի արդի քաղաքների անբաժանելի մասնիկների և շարունակաբար խնամվում են համապատասխան մարմինների կողմից: Այդուհանդերձ, այս ամենը հիմնականում վերաբերում է քաղաքների կենտրոնական հատվածներում գտնվող հու-շարձաններին, մինչդեռ բնակավայրերի ծայրամասերում տեղակայված խորհրդային շատ հուշարձաններ ներկայում գտնվում են անմխիթար վիճակում, քանզի նրանց խնամքն իրենից ենթադրում է ֆինանսական մեծ ծախսեր: Այդ հուշարձանների մի մասը կամ կորցրել է իր նախկին համատեքստը կամ հիշատակման արարողություն-ների ժամանակ փոխարինվել է խորհրդային տարիներին տեղադրված նմանատիպ մեկ այլ հուշարձանով: Հետխորհրդային Հայաստանի քաղաքների նշանային լանդշաֆտի մաս են շարունակում կազմել Հայրենական պատերազմին նվիրված հուշարձանները, որոնք կանգնեցված լինելով ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում, շարունակում են գործել իրենց խորհրդային համատեքստում: Հայրենական պատերազմի բազմաթիվ հուշար-ձանների մի մասն է շարունակում պաշտոնական արարողությունների մասնակից մնալ, մինչդեռ մյուս հուշարձանները ճիշտ է պահպանվելով իրենց տեղադրության վայրերում՝ դադարում են հիշատակային արտիկաների մաս կազմել: Այդ հուշարձանների մի մասը երբեմն երկրորդ շնչառություն է ստանում, երբ այդ արձանների տարածքում տեղադրում են Արցախյան պատերազմի զոհերի, երբեմն նաև Հայոց Ցեղասպանության և Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձաններ:

3.4 Հուշարձանների տեղադրության տարածքները արդի հանրային քննարկումներում: Հանրային դիսկուրսում քաղաքի կենտրոնը ձևա-կերպվում է որպես բնակավայրի ամենապրեստիժային վայրը: Այս դիրքից են մեկնաբանվում նաև հուշարձանների տեղադրման տարածքների ընտրությունը: Քաղաքի կենտրոնի պրես-տիժային դիսկուրսը վերջին տարիներին սկսեց ազդել թաղային հեղինակությունների հիշատակին նվիրված հուշաղբյուրների տեղադրության տարածքի ընտրության վրա: Վերջին տարիներին ականատես ենք լինում, որ այդ կարգի հուշաղբյուրները դուրս են եկել առանձին թաղերի բակերից և սկսել են հայտնվել քաղաքների կենտրոնական հատվածներում: Զբոսաշրջության զարգացման հարցում հուշարձանի կարևորումը նպաստեց քաղաքների կենտրոնական հատվածներում մեծ քանակությամբ հուշարձանների

տեղադրմանը: Քաղաքների կենտրոնները արդի հայաստանյան հան-
րային դիսկուրսում ձևակերպվում են որպես հուշարձան
տեղադրելու ամենապրեստիժային և հարգի տարածքներ:
Այնուհանդերձ, կենտրոնի նմանօրինակ ծանրաբեռնումը երբեմն
քննադատության է արժանանում հանրային քննարկումներում՝
հորդորելով քաղաքային իշխանություններին արձանախեղդ չանել
քաղաքները:

ԳԼՈՒԽ 4-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

4.1 <u>Հուշարձանը և հաղորդակցության պատկերացումները խորհրդային տարիներին:</u> Խորհրդային իշխանությունների կողմից
որդեգրված քաղաքականու-թյունը ոչ միայն միտված էր հանրային
տարածքներում տեղադրվող հուշարձանների հանդեպ ձևավորել
պաշտամունքային վերաբերմունք, այլև սահմանումներ էր
նրանց հետ քաղաքացիների հաղորդակցության պրակտիկաները:
Ուստի, պատա-հական չէ, որ խորհրդային տարիներին տեղադրված
հուշարձանների մեծ մասը իրեն-ցից ներկայացնում են բարձր
պատվանդանի վրա տեղադրված արձաններ, պատվանդանների վրա
տեղադրված կիսանդրիներ, մոնումենտալ հուշահամալիրներ,
հուշարձաններ, որոնք ձևավորում էին շրջակատարածքն այնպես, որ
այդ կոթողները ստա-նում էին պաշտամունքային բնույթ:
Խորհրդային հուշարձանը ենթադրում էր դիտողի կողմից
փոխհարաբերության և մասնակցության բավականին սահմանափակ
եղանակ-ներ: Խորհրդային քաղաքացու շփումը հուշարձանների հետ
գերազանցապես սահմա-նափակվում էր հուշարձանների բացման
արարողություններին ակտիվ մասնակցու-թյամբ, հիշարժան օրերին
և տարեդարձների ժամանակ հուշարձանների մոտ ծաղիկ-ների և
ծաղկեփնջերի տեղադրմամբ: Նմանատիպ պրակտիկաները ստեղծում
էին հու-շարձանային հաղորդակցման որոշակի մշակույթ կամ ծես,
որն առավել վերահսկելի և կառավարելի էր ադմինիստրատիվ
ինստիտուտների կողմից և բնորոշ էր խորհրդային տոտալիտար
համակարգին ու նրա վարած վերահսկողական քաղաքականությանը:
Խորհրդային իշխանությունների կողմից պարբերաբար
կազմակերպվող միջոցա-ռումների, հուշարձանների հետ
քաղաքացիների շփման վերասկողության արդյունքում ձևավորվել
էին հուշարձանների հետհաղորդակցման պաշտոնական եղանակները:

4.2 <u>Հուշարձանը և հաղորդակցության նոր պրակտիկաները հետխորհրդային Հայաստանում:</u> ԽՍՀՄ փլուզման արդյունքում, երբ
վերացվեց տոտալ վերա-հսկողությունը և բնակիչների ժամանցի
կազմակերպման վերահսկողությունը մեղմվեց, վերացվեց նաև

«պատկերապաշտության» վերարտադրմանն ուղղված քաղաքակա-նությունը՝ հիմք հանդիսանալով քաղաքային արձանների «ապապաշտամունքայնաց-մանը» և նախադրյալներ ստեղծվեցին նրանց հետ հաղորդակցության նոր պրակտի-կաների հանդես գալու համար: Հուշարձանների հետ հաղորդակցության նոր պրակտիկաների հանդես գալուն նպաստեց նաև ՀՀ քաղաքային իշխանությունների կողմից քա-ղաքների հանրային վայրերում նոր տիպի հուշարձանների տեղադրումը: Նմանատիպ հուշարձանները տեղադրվում են գերազանցապես քաղաքների բանուկ մայթերի վրա, մարդկանց շարժին ավելի մոտ: Նախկին մոնումենտալ պատվանդանների փոխարեն նոր արձանները դրվում են կամ ցածր պատվանդանների վրա կամ ընդհանրապես հայտնվում գետնին՝ դառնալով ավելի մատչելի հաղորդակցության համար: Արդյունքում քաղաքացիների շփումը նոր տեղադրվող արձանների հետ, ինչպես նաև խորհրդային տարիներին տեղադրված հուշարձանների հետ, առավել անմիջական է դարձել՝ հա-ղորդակցության պաշտոնական եղանակներից զատ ներառելով նաև ֆիզիկական շը-փումը: Հուշարձանների հետ անմիջական շփումը հետխորհրդային տարիներին ներա-ռեց նաև հուշարձանների տարբեր բաղադրիչների գողությունը, նրանց ուղղակի վնա-սումը, արձանների վրա արվող գրառումները և վանդալիզմ որակվող այլ գործո-ղությունները:

<u>4.3 Հուշարձանային հաղորդակցության նոր պրակտիկաները հանրային քննարկումներում:</u> Հուշարձանների հետ հաղորդակցության նոր եղանակները ժամա-նակի ընթացքում վերածվում են ընդունելի պրակտիկաների, նույնիսկ սկսում են խրա-խուսվել, ինչը քաղաքային իշխանությունների կողմից նմանատիպ հաղորդակցության համար մատչելի արձանների տեղադրումը դարձնում է ընդունելի նաև արդի հայաս-տանյան հանրային դիսկուրսում: Հուշարձանների հաղորդակցման համար մատչելիու-թյան կարևորությունը շրջանառվում է նաև քաղաքային իշխանությունների կողմից՝ դառնալով այս կամ այն արձանի տարածքի կամ հորինվածքի ընտրության հիմնական հիմնավորում: Հանրային քննարկումներում և ՁԼՄ-ներում հուշարձանային հաղորդակ-ցության նոր պրակտիկաները քննադատվում են միայն այն դեպքում, երբ հուշարձան-ները դառնում են «վանդալների» «զոհերը» (վնասվում են, գրություններ են հայտնվում):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանի քաղաքային արձանային լանդշաֆտի փոխակերպումները

բազմաշերտ են և ընդգրկում են այդ կառույցների հետ կապված բովանդակային և ֆիզիկական-տարածական գրեթե բոլոր առումները: Այդ փոխակերպումներում առաջնային դերակատարություն ունի հայաստանյան հուշարձանային լանդշաֆտը ձևավորող նոր սուբյեկտների հանդես գալը:

Խորհրդային տարիների Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հայտնված մոնումենտալ քանդակները կուսակցության և նրա ղեկավարի հստակ քաղաքականության արդյունք էին և վերահսկվում ու իրականացվում էին մեկ կենտրոնից: Խորհրդային քաղաքացին իրեն հատկացված դերն ուներ խորհրդային քաղաքների լանդշաֆթների ձևավորման հարցում, որն ուղղորդվում և վերագրվում էր կենտրոնից և հիմնականում սահմանափակվում՝ նոր տեղադրվող հուշարձանների նախաձեռնություններին համաձայնություն տալով և պաշտպանելով:

Սպիտակի ավերիչ երկրաշարժը, արցախյան շարժումը և պատերազմը հիմք հանդիսացան հանրության, որպես հուշարձան տեղադրող նոր դերակատարի հայտնը-վելուն: Քաղաքական նոր իրավիճակի հանդես գալով, Հայաստանի անկախացման և նոր պետության ստեղծման պայմաններում, նոր համայնքային իշխանությունները աստիճանաբար հայաստանյան նոր հուշարձանային քաղաքականությունը վերցրեցին իրենց վերահսկողության տակ և սկսեցին հանդես գալ որպես այդ քաղաքականության ակտիվ իրականացնող: Քաղաքական նոր պայմաններում, ֆինանսական միջոցներ պահանջող այս ոլորտում, սկսեց մեծանալ անհատ գործարար-բարերարների, տարբեր կազմակերպությունների դերը հետխորհրդային Հայաստանի հուշարձանային լանդ-շաֆտի ձևավորման գործընթացներում:

Հայաստանում քաղաքական համատեքստի փոփոխումը, հուշարձանային քաղա-քականության իրականացման նոր սուբյեկտների հայտնվելը նպաստեցին այդ քաղաքներում արդեն տեղադրված հուշարձանների վերաիմաստավորմանը, հանրային վայրերում նոր բովանդակային ուղերձներ կրող հուշարձանների հայտնվելուն:

Խորհրդային տարիներին հուշարձանային քաղաքականությունը գաղափարակա-նացված էր: Քաղաքների հանրային վայրերում հայտնվող հուշարձանները պետք է ներկայացնեին հեղափոխության և Կոմունիստական կուսակցության հայացքները, խորհրդային քաղաքացուն դաստիարակեին սոցիալիստական ներկայի և ապագայի գաղափարներով: Խորհրդային իշխանությունները վերահսկում էին տեղադրվող արձանների ձևը, բովանդակությունը, քաղաքներում

հայտնվող նոր հուշարձանները ենթարկում խիստ գրաքննության՝ բացառելով անցանկալի բովանդակությամբ հուշարձանների տեղադրումը:

Արցախյան շարժման և անկախության տարիներին պայքար սկսվեց խորհրդային անցյալի խորհրդանիշների դեմ, Հայաստանի բնակավայրերի տարածքներից հեռաց-վեցին հեղափոխական գործիչների արձանները: Ազգությամբ հայ կամ արվեստի ոլոր-տի ներկայացուցիչների նվիրված խորհրդային արձաններից շատերը վերամեկնաբան-վեցին նոր համատեքստում և շարունակեցին մնալ իրենց տեղադրության վայրերում:

1988-1990-ականների սկզբներին Հանրության կողմից հուշարձանների տեղա-դրման առիթ հանդիսացան Արցախյան շարժումը, Արցախյան ազատագրական պա-տերազմը, 1988 թ.-ի աղետալի երկրաշարժը: Հետխորհրդային տարիներին համայն-քային իշխանությունների, բարերար-գործարարների, կազմակերպությունների, ան-հատների և տարբեր խմբերի ջանքերով Հայաստանի քաղաքային լանդշաֆտում հայտնվեցին նոր ուղերձ կրող հուշարձաններ, որոնց մեծ մասը դուրս մնալով խորհրդային գափափարաբանությունից արգելված էին խորհրդային տարիներին:

Քաղաքական նոր համատեքստի առկայությունը, երբ վերաիմաստավորվում էր հնի նշանային ներկայությունը Հայաստանի քաղաքային տարածքներում, հուշարձան տե-ղադրող նոր սուբյեկտների հայտնվելը, նրանց կողմից երևան եկած նոր նշանները չէին կարող ազդեցություն չունենալ քաղաքներում արդեն առկա հուշարձանային տա-րածքների և նորերի տեղադրման տարածքների ընտրության վրա: Խորհրդային տարիներին Հայաստանի քաղաքներն ունեին իրենց վարչական, մշակութային, արդյու-նաբերական հատվածները, որոնք ունեին իրենց հատուկ հուշարձանային կոնտինուումը: Նոր հուշարձանային քաղաքականության պայմաններում, ՀՀ համայնքային իշխանութ-յունները ձգտում են պահպանել քաղաքների հանրային տարածքների նշանային և համատեքստային անընդհատությունը: Սակայն, երբ հանրության կողմից ինքաբուխ տեղադրվող հուշարձանները պատեցին Հայաստանի քաղաքների թաղերը, բակերը, երկրորդական փողոցները, նշանային հաստատված կամ ձևավորվող կոնտինուումները փոփոխություններ կրեցին:

Հայաստանի անկախության տարիներին հանրության կողմից նկատելի են նաև քաղաքային որոշ տարածքների բովանդակային նոր կոնտինուումների ստեղծման փոր-ձեր: Հատկանշական են նաև Հայրենական պատերազմի հուշարձանների տարածքնե-րում, նոր

հուշարձանների տեղադրմամբ, պանթեոնների ստեղծման պրակտիկաները:

Խորհրդային տոտալ վերահսկողության համակարգի վերացումը, հետխորհրդային նոր հուշարձանային քաղաքականությունը, հանրային վայրերում նոր տիպի հուշարձանների հայտնվելը նպաստեցին նաև այդ կոթողների հետհաղորդակցության նոր պրակ-տիկաների ի հայտգալուն, որոնք երբեմն դեստրուկտիվ բնույթ են կրում:

Հետխորհրդային Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի ձևա-վորումը անկախության վերջին տարիներին գլխավորապես անցել է քաղաքային իշխա-նությունների վերահսկողության տակ, ովքեր էլ տարբեր բարերարների ու գործարար-ների ակտիվ մասնակցությամբ իրականացնում են արդի հայաստանյան հուշարձա-նային քաղաքականությունը: Անկախության առաջին տարիներին, հուշարձան տեղա-դրող ամենակտիվ սուբյեկտ հանդիսացող հանրությունը, չնայած հանրային վայրերում շարունակաբար անհատներին նվիրված հուշաղբյուրների կանգնեցման, հուշարձա-նային քաղաքականության վերաբերյալ իր ակտիվությունը հիմնականում տեղափոխել է վիրտուալ տիրույթ՝ շարունակաբար մեկնաբանելով արդի հայաստանյան հուշարձա-նային քաղաքականությունը:

Այսպիսով՝

- Հետխորհրդային Հայաստանում վերջին տարիներին տեղադրվող հուշարձանները համայնքային իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության արդյունք են և գտնվում են նրանց վերահսկողության տակ: Իսկ ՀՀ Քաղաքացին հիմնականում դուրս է մնացել հուշարձանների իրականացման գործընթացների մասնակցությունից՝ վերածվելով միայն այդ կոթողների հասցեատիրոջ:
- Հանրային դիսկուրսը, վերջին տարիներին, սկսել է հանդես գալ որպես հուշարձանային քաղաքականության իրականացման կարևոր դերակատար՝ հաճախակի ստիպելով համայնքային իշխանություններին հաշվի նստել հանրային տեսակետների հետ, երբեմն էլ որոշել որոշ հուշարձանների տեղադրման ճակատագիրը:

Դեռ ավելին, անհատների հուշաղբյուրների լայն տարածումը, ինչպես նաև ապրիլյան պատերազմի զոհերի հուշարձանացման դեպքերը վկայում են, որ հանրու-թյունը ոչ միայն չի հրաժարվել քաղաքային հուշարձանային լանդշաֆտի ձևավորմանը իր անմիջական մասնակցությունից, այլև պատմական որոշակի

պայմաններում կարող է կրկին դառնալ այն փոխակերպման ենթարկող ամենաակտիվ սուբյեկտը:

<u>Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում</u>

1. Atanesyan G., The new interpretations of functions of public monuments in contemporary public discourse, Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017, էջ 427-433:
2. Атанесян Г., Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica: Труды Института востоковедения Российско-Армянского университета, Выпуск II, Изд-во РАУ, 2017, с. 31-36.
3. Atanesyan G., The Newly Unveiled Monument as a Subject of Conflicting Discourses (Political, Public and Aesthetic Interpretations of G. Nzhdeh's Monument) // Civilization researches № 13, Ivane Javakhishvili Tbilisi State University Press, Tbilisi, 2016, pp. 25-28.
4. Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., Լենինյան պատվանդանների ոդիսականը հետխորհրդային Հայաստանում, ԵՊՄՀ Հայագիտական հանդես, № 2(40), Երևան, 2018, էջ 163-177:
5. Атанесян Г., Переосмысление новых практик возведения городских памятников в постсоветской Армении // Урбанистика, № 3, 2018, с. 21-26, http://e-notabene.ru/-urb/article_26375.html, 24.05.2018.
6. Атанесян Г., Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении // Человек и культура, № 3, 2018, с. 1-6, http://e-notabene.ru/-ca/article_26168.html, 03.05.2018.
7. Атанесян Г., Христианская символика в городских памятниках постсоветской Армении // Культура и искусство, № 5, 2018, с. 1-5, http://e-notabene.ru/-pki/article_26254.html, 13.05.2018.

Атанесян Гарик Граатович

Советский и постсоветский памятник в современном армянском публичном дискурсе

Резюме

Основной целью диссертационного исследования было выявление новых и качественных преобразовании мемориального ландшафта постсоветской Армении и роли общественности в этих изменениях. Начиная с 1990-х годов, армянская общественность стала новым активним субъектом решающий судьбы городских памятников. В течение почти 30 лет независимости Армении этот новый субъект сыграл решающую роль в организации символических ландшафтов постсоветских городов страны.

Изменение политического контекста, появление новых субъектов ответсвенных за осуществление монументальной политики, способствовали переосмыслению уже существующих памятников, воздвигнутых на территории Армении, и появлению памятников с новыми содержаниями. После распада СССР символические ландшафты городов Армении подверглись большим изменениям. В первые годы независимости началась борьба против символов советского прошлого почти во всех постсоветских государствах, сделав главной мишенью этой борьбы памятники революционеров и вождей советского режима. Десятки памятников В. Ленина были демантированы со всех городов Армении при активном участии общественности. С другой стороны, многочисленные памятники Великой Отечественной войны вместе с монументами, посвященными культурным деятелям и советским политикам армянского происхождения остались на своих прежних местах и стали неотделимой частью городского ландшафта постсоветской Армении.

Начиная с 1988 г. армянская общественность начала устанавливать множество памятников по всей территории Армении, посвященных жертвам Карабахской войны и Спитакского землетрясения. В последуюшие годы, силами граждан, городских властей и благодетелей в общественных местах городов Армении появились памятники посвещенные политическим, государственным деятелям, героям освободительной борьбы, памятники религиозного характера, памятники жертвам геноцида и другие произведения. Мемориалы, памятники посвященные жертвам войны, землетрясения, памятники-родники в память о локальных авторитетов заполнили публичные пространства, дворы, вторичные улицы городов постсоветской Армении, что не было распространенной практикой в советские годы. В постсоветские годы многочисленные памятники жертвам Арцахской войны, Спитаксого землетрясения были установлены на территориях памятников Отечественной войны, формируя пантеоны.

Активная деятельность армянской общественности по возведению памятников в городах Армении в последние годы СССР и первых годах независимости осталась позади и с конца 1990-х годов перешла под контроль городских властей. Городские власти РА по сей день продалжают являться доминантным субъектом установления памятников в постсоветской Армении.

В советские годы памятники, несущие важные послания, установливались в самых многолюдных местах поселении, в городских центрах, площадях, парках и садах, на возвешениях, создавая в городах сильные знаки. Разные территории городов формировали разные символические континуумы, принимая памятники, чьи содержания соответствовали контексту этих территории. В постсоветские годы городские власти питаются сохранить эти континуумы, однако время от времени силамы разных субьектов разные памятники устанавливаются на несоответствущих сиволических территориях, разрывая пржный континуум или создавая новый. Новые памятники устанявливаются на второстепенных улицах городов Армении, что является новой практикой, непреемлимой в советские годы.

В советские годы власти определяли практики общения граждан с памятниками и контролировали их. Монументальные памятники героев, разных деятелей почитались, а всякая форма неформального общения с этими монументамы строго запрещалась. Однако, уже в постсоветской Армении время от времени появляются новые памятники, размещенные на оживленных тротуарах, ближе к движению людей. Вместо прежних монументальных пьедесталов новые статуи ставятся либо на нижние пьедесталы, либо вообще устанавливаются на земле, становясь более доступными для общения. Появление вонвых памятников, а также слабый или вообше отсуствуюший контроль со стороны властей повлияли на появления новых неформальных практик коммуникации с памятниками.

Общественный дискурс в последнее время начал играть важную роль в осуществлении мемориальной политики в постсоветской Армении. Активная деятельность армянской общественности по возведению памятников в городах Армении осталась позади, и перешли на виртауальный уровень (интернет и соцсети). Монументальная политика в целом перешла под контроль городских властей. Однако, Апрельская война 2016 г. показала, что в определенных условиях армянская общественность готова снова взять инициативу по установке памятников в свои руки.

Garik H. Atanesyan

Soviet and Post-Soviet Monument in Contemporary Armenian Public Discourse

Summary

The main purpose of the dissertation research is to identify new and qualitative transformations of the memorial landscape of post-Soviet Armenia and the role of the public factor in those changes. Starting from the 1990s citizens of Armenia have had a huge impact on the fate of urban monuments. For almost 30 years of Armenia’s independence, individuals and groups of armneians have played a crucial role in the organization of symbolic landscapes of post-soviet cities.

The collapse of the Soviet Union contributed to the rethinking of existing monuments erected on the territory of Armenia and the erection of monuments with new contents. After Armenia's independence, the symbolic landscapes of Armenian cities underwent major changes. In the first years of independence, a struggle began against the symbols of the Soviet past in almost all post-Soviet states, making the main target of that struggle the monuments of revolutionaries and leaders of the Soviet regime. Dozens of monuments of V. Lenin were removed from all cities of Armenia with active participation of ordinary citizens. On the other hand, numerous monuments of the Great Patriotic War together with monuments dedicated to cultural figures and Soviet politicians of Armenian origin remained in their former places and became an inseparable part of the urban landscape of post-Soviet Armenia.

Starting from 1988, individuals and groups of Armenians have begun to erect many monuments throughout Armenia, dedicated to the victims of the Karabakh War and the Spitak earthquake. In subsequent years, various citizens, city authorities and benefactors have erected monuments dedicated to political, state figures, religious monuments, monuments to the victims of Armenian Genocide and other statues throughout post-soviet cities of Armenia. Memorials, monuments dedicated to the victims of war, earthquake and memorials-springs in memory of local authorities filled public spaces, courtyards, secondary streets of post-Soviet Armenia, which was not a common practice in the Soviet years. In the post-Soviet years, numerous monuments to the victims of the Artsakh war, the Spitak earthquake were placed on the territories of the monuments of the Patriotic War, forming pantheons.

The active practices of individuals and groups of Armenians on the erection of monuments in the cities of Armenia in recent years of the USSR and the first years of independence has been left behind. Starting from late 1990s memorial policy has come under the control of city authorities, who began monitoring and controling the changes in urban symbolic landscapes and have become the dominant subject of monument erection in post-Soviet Armenia.

During the Soviet era, monuments bearing important messages were erected in the most crowded areas of the settlements, in the city centers, squares, parks, on the hills, creating strong signs in the cities that should constantly remind the citizens of their heroes. Different areas of cities formed different symbolic continuums, welcoming monuments whose contents corresponded to the context of their territories. In the post-Soviet years, the city authorities are trying to preserve these continuums, but from time to time, different monuments are being installed in inappropriate symbolic territories, tearing apart existing continuums or creating new ones.

Soviet authorities used to define the communication practices of citizens with monuments and controlled them. Monumental statues of heroes, public, political and cultural figures were ment to be worshiped, and all forms of informal communication with these monuments were strictly forbidden. New forms of monuments have recently started

to appear on the busy sidewalks, closer to the movement of people. Instead of the former monumental pedestals, these new statues are placed either on the lower pedestals or are generally installed on the ground, becoming more accessible for communication. The erection of these monuments, as well as the almost nonexistent control by the authorities over the monument communication practices, influenced the emergence of new informal practices of monument communication.

Public discourse has recently begun to play an important role in the implementation of the memorial policy of post-soviet Armenia. The active implication of individuals and groups of Armenians in the monument erection practices is left behind nowadays. Citizens of the RA have been engaged with the memorial policy through social media for the last years of independence. Memorial policy as a whole passed under the control of the city authorities. However, the April war in 2016 showed that under certain conditions citizens of Armenia are ready again to take the initiative of monument erection into their own hands.